

րօբները» կաղնու ճղներից հիւսուած կլոր կամ քառանկիւնի ձև ունին, «Ճեղով» ծածկուած։ Լաւ շէնքերը շինուած են տաշած կլոր փայտից և մանր տախտակով են ծածկուած։ Միւս երկու շէնքերն են՝ փուռը և մարագը։ Փուռը տան մէջ չեն շինուած, այլ ջոկ տեղ, առանձին ծածքի տակ։ իսկ մարագը հսսարակ «Ճէ» շէնք է, խոտով կամ «Ճեղով» ծածկուած Սովորաբար այդ բոլոր շէնքերը շինուած են տներին մօտիկ, գիւղամիջուած։ Երբեմն միայն պակաս եկած, նոր շինուելիք «մաշինաները» շինուած են թութունի պլանտացիաներուած, եթէ տեղը յարմար են գտնուած։

ՊԵՐԱՊՄՈՒՆՔՆ ՈՒ ՏՆՏԵՄԱԿԵՆ ՎԻՃԱԿԻ.

Համշէնցիները թէ իրանց հայրենական ափերուած և թէ այստեղ բացառապէս երկրագործութիւնով են պարապուած։ Եթէ համեմատելու լինինք մեր կողմերուած ապրողներին հայրենական ափերուած մնացողների հետ, նրանց պարապմունքի ու տնտեսութեան ձևերի մէջ շատ քիչ փոփոխութիւն կը գտնենք, եթէ զրիշենք ու մի կողմ դնենք թութունի մշակութիւնը, որ շատ տեղ հայրենիքուած արդէն բոլորովին վերջացել է, իսկ եղած տեղերուածն էլ հետզհետէ աւելի յետ է գնուած։ Մինչեռ մեր Կովկասեան ափերուած այդ բոյսի մշակութիւնը մի քանի տարուց դէսը դարձել է մի այնպիսի տիրապետող ու գլխաւոր պարապմունք, որ անկարելի է երևակայել այդտեղ, մասնաւորապէս Սուխումի շրջանուած մի հայ գաղթականութիւն, մի հայ գիւղնոյն իսկ մի հայ գաղթական, որ դրանով պարապելիս չը լինի։ Թութունը մեր կողմի համշէնցի հայերի արդիւնաբերութեան մէջ առաջին ու ամենագլխաւոր տեղն է բռնուած։ Սուխումի շրջանուած տասնեակ հազար փութ թութուն միայն համշէնցի հայերն են արտադրուած։ Դրանից կարելի է հասկանալ, թէ ինչքան մեծ չափեր է ստացել այդ բոյսի մշակութիւնը նրանց մօտ։ Ճիշտ է՝ Չերնոմօրի կողմերուած, բացի Սօջի շրջանից, թութունի մշակութիւնը այնքան մեծ ծաւալ չունի, բաց հաստատապէս կարելի է առաջին տեղը տալ համշէնցի հայերին ամբողջ Կովկասեան ափերի թութունի արդիւնաբերութեան մէջ։

Հացաբոյսերի մէջ առաջինը և ամենատարածուածը նրանց մօտ սիմինդրն է, որ ինչպէս հայրենիքուած, նոյնպէս և այստեղ, կազմուած է նրանց գլխաւոր ուտելիքը, նրանց ամենօրեայ հացը։ Ամբողջ Կովկասեան ափերի համշէնցիների մօտ այդ բերքը համարեա ոչ մի տեղ չէ արտահանուած։ միայն իրանց համար են ցանուած։ Տեղ-տեղ էլ եր-

բեմն, երբ թութունի պատճառով ցանքը քիչ է լինում, իրանք ստիպուած են լինում ուրիշներից գնելու:

Ցորեն թէև շատերը ցանում են, բայց մէկ որ ամենքը չեն ցանում, մէկէլ որ՝ տեղ-տեղ ցանածը չի լինում, լաւ չի գալիս: Իրանց ասելով, էլի հայրենիքում ցանողները թէ հիմիկուանից շատ են եղել եւ թէ լաւ էլ տուել է: Բայց էլի չնայելով աննպաստ պայմաններին, ցորենի մշակութիւնը հետզհետէ աւելի ու աւելի է տարածւում հայ գաղթականների մէջ, թէև էլի առաջուան պէս՝ նրա հացը միայն պաս ու տօն օրերին են բանեցնում:

Միւս հացաբոյսերից ցանում են վարսակ ու դարի. աւելի առաջինը: Վարսակը նրանց հայրենիքում, մասնաւորապէս ձանիկի ափերում (Զարշամբայի գաւառամասում) մեծ արտահանութիւն է ունեցել:

Տէխնիական բոլսերից, բայցի թութունից, ցանում են էլի կանեփ, թէև ոչ այնքան շատ ինչքան հայրենիքում: Այնտեղ թէ կանեփ շատ են ցանել և թէ տեղ-տեղ վուշ էլ են ցանել: Խոկ այստեղ սովորաբար միայն կանեփն են ցանում և այն էլ հազիւ մի «ածուքի» չափ տեղ: Կանեփի թելից են գործում իրանց բոլոր ներքին հաղուստը և տանը բանեցնելիք բազմատեսակ «եաղլուխները»:

Այգեգործութիւնը թէև առհասարակ կանոնաւոր կերպով ու մեծ չափով չէ տարածուած նրանց մէջ, բայց հետզհետէ պտղատու նորնոր ծառեր են աւելցնում իրանց «ածուքներում» ու արտերում, մասնաւանդ նրանք, որ սեփական հողեր ունին, բերելով պատուաստները իրանց հայրենիքում յայտնի ու գովուած տեսակներից. գլխաւորապէս՝ տանձի, խնձորի, թթի, սալորի, բալի և շագանակի ծառերից: Տեղտեղ սկսել են նաև բաւական մեծ չափով խաղողի որժեր տնկել տեղական, ծառի վրայ բարձրացող տեսակից (իզիբէլլա, տեղական լեզուով «աղէս»): Տեղ-տեղ պատահում են և պտղատու ծառեր այդ ափերի հին բնիկներից մնացած. ինչպէս օրինակ՝ տանձենիներ զափշուկայի կողմերում (Զերնօմօրի վիճակ), չերքէզներից մնացած, և խաղողի ու թզի ծառեր Սուխումի շրջանում՝ աբխազների ժամանակից, իրանց պատմածներին նայելով, հայրենիքում նրանք պտղատու ծառեր շատ են ունեցել, այն էլ՝ ընտիր տեսակներից, թէև այնտեղ էլ կանոնաւոր ալղիներ չեն ունեցել. պատուաստների մեծ մասը ճանապարհների, արտերի ու անտառների մէջ է եղել ցրուած և մի մասն էլ տներին մօտիկ:

Ճերամապահութիւնով այստեղ համարեա բոլորովին չեն պարապում. էլի հայրենիքում քիչ-շատ պարապել են: Դրա պատճառը մէկ թութունն է, մէկ էլ իրանց անհող վիճակը:

Մեղու պահում են, բայց ոչ ամենքը. աւելի քչերը, քան շա-

տերը: Տեղ-տեղ պատահում են 40 և մինչև իսկ հարիւր փեթակով մեղու պահողներ, բայց դրանք հազւագիւտ են. սովորաբար քիչ են ունենում:

Ինչպէս հարենիքում, նոյնպէս և այստեղ, ամեն տուն ունի իր բանջարանոցը, կամ ինչպէս իրանք են ասում, «ածուքը», որ համարեա բացառապէս համշէնցի հայ գեղջկուհիների ձեռքով է ցանւում ու մշակում: Այստեղ՝ գոգնոցը կապած, փետատը ձեռքին՝ բանում ու աշխատում է նա ժիր տղամարդու պէս, հետն էլ ժամանակ դտնելով մի կողմից երեխանց ու տան պակասներին նացել, միւս կողմից մասնակցել իր մարդու աշխատանքներին: «Ածուքի» բոյսերից ամենից շատ տարածուածը «բօնջարն» ու լրիխան է, Խսկապէս լրիխան «ածուքում» այնքան չեն ցանում, ինչքան սիմինդրի հետ խառը՝ մէկ արտում կամ առանձին: Խսկ «բօնջարը», որ կաղամբի մի տեսակն է (կանաչ ու յրգլխող), «ածուքի» ամենասովորական բոյսն է. առանց դրան համշէնցի հայը չի կենալ. պաս օրերին զիսաւորապէս այդ են գործածում: «Քօնջարից» յետոյ «ածուքում» մեծ տեղ են բռնում պրասը, սոխն ու սխսորը: Բացի դրանցից, «ածուքում» պատահում են էլի՝ տօնաթթ, բազրիջան, կարտօֆիլ, վարունգ, դդում, ձմերուկ ու սեխ, թէև միւնոյն բոյսերը աւելի մեծ չափով արտերում էլ են ցանում, սիմինդրի կամ թութունի հետ խառը:

Բացի բուն երկրագործութիւնից ու տեխնիկական բոյսերի մշակութիւնից, համշէնցի հայեր պարապում են նոյնպէս անասնապահութիւնով և տնային մանր արհեստներով: Անասնապահութիւնն այնքան զարգացած չէ նրանց մէջ. պահում են միայն այնքան, ինչքան հարկաւոր է երկրի մշակութեան և իրանց տան կարիքների համար, դրանք են՝ եզ, կով, ձի, Սովորաբար մի տուն պահում է մի զոյգ եզ (հասարակ կամ «գոմշաեզ»). շատ քչերն են երկու զոյգ ունենում: Կիթելու համար պահում են մի-երկու կով, երեքից ոչ աւելի, կամ մի-երկու կիթի գոմէշ: Աւելի ունեցողը ամենաշատը մի-երկու կիթի գոմէշի հետ մի-երկու էլ կիթի կով կունենայ. գոնէ Սուլխումի շրջանում դրանից աւելի ունեցողները հազւագիւտ են: Մալերի մէջ ամենից շատ տարածուածը «գոմշամալն» է. այդպէս է գոնէ Սուլխումի շրջանում, ուր գոմէշը ընդհանրապէս լաւ է դիմանում: Եւ պէտք է ասել, որ այդ կողմերի համար, ուր ճանապարհներ չկան, չորս կողմը անտառ է, անձրևն ու ցեխը անպակաս է, շատ դժուար կըլինէր երկրագործի բանը, եթէ գոմէշը լինէր Կաթնատնտեսական արդիւնքները բոլորը իրանց համար են գործածում: Երբեմն նոյն խսկ նրանցից շատերը իւղը դրսից են գնում. տեղ-տեղ՝ միայն պատահում են նրանց մէջ իւղ ծախողներ: Պանիր համարեա չեն շինում. քչով շինում են միայն Տրա-

պիգօնին մօտիկ դիւղերից եկողները։ Անասնապահութիւնով աւելի պարապում են Չերնօմօրի կողմերի հայ գաղթականները։ Ոչսար ու խոզ բոլորովին չեն պահում։

Բացի զուտ երկրագործութիւնից, համշէնցի հայը դարձեալ ժամանակ է գտնում տնացին մանր արհեստով զբաղուելու։ Հագուստից ու ձեռագործ գործուածքներից սկսած մինչև իր տան շէնքն ու այլ և այլ երկրագործական սարքեր շինելը, բոլորին նա հասնում է։ Բոլորը նրա ձեռքից գալիս է։ Զատերը գիտեն իրանց մէջ սազ, լուծ, արօր, տափան շինելը։ Հիանալի ամաններ են շինում փայտից—ջուր կրելու, թթու գնելու, կաթնեղէն արդիւնքները պահելու համար տակառներ, օշնակներ, եղածաններ, նոյնպէս և տաշտեր խմորի համար և տեսակ-տեսակ մեծ ու փոքր զամբիւզներ՝ զանազան բաներ պահելու և կրե-լու համար։ Բոլորն էլ ամուր ու գեղեցիկ, դիմացկուն փայտից շինուած։

Կիրակիներից ու տօներից գուրս ուրիշ ոչ մի ժամանակ նրանց պարապ չէք գտնիլ։ Տույեր շատ հազարիւտ են նրանց մէջ։ Կը հա-ւատաք, եթէ ասեմ որ երեկոյեան՝ արտից տուն դառնալիս և կամ մի տեղ գնալիս, պարապ ըմնալու համար նրանք թել են մանում կամ գուլպայ գործում։ Եւ մի բան, որ շատ աչքի է ընկնում, այդ տղա-մարդկանց գուլպայ գործելն է։ Նրանց կանալք են իմանում։ Նրանց համար էլ տղամարդիկն են գործում։ Բաց սրանից ըլ հասկանաք, թէ կինը նրանց մօտ պարապ նստած է, բան չի անում։ Երբէք. գուցէ ոչ մի տեղ գիւղացի կինը այնքան գործ չունի, այնքան չի բանում, ինչքան նրանց մօտ։ Սիսալուած չեմ լինիլ, եթէ ասեմ, որ նրանց մօտ թերեւս կինն աւելի է աշխատում, քան տղամարդը։ Բացի պատ անե-լուց ու հերկից, նա մասնակցում է իր մարդու ամեն տեսակ աշխա-տանքին։ Տունը, գոմը, «ածուքը», արտը, մալերին, անտառը,—ամեն տեղ հասնում է թիւրքահայ կինը, և այդքան աշխատանքի մէջ նա դարձեալ պակաս չի թողնում տան բաները։ Նա է ջուրը կրում, օջա-խը վառում, եփում, թափում, լուանում, ուտեցնում ամեն օր ոչ միայն տանեցոց, այլ և երբեմն տասնաւոր բանւորներին, երեխանց նայում ու մեծացնում։ Եւ այդ բոլորի հետ էլի ժամանակ է գտնում —երբեմն «ուօկ», իլիկ, ճախսարակ ու ասեղ բանեցնում, կանեփից ու բրդից թել մանդում, «լաթ» գործում, շապքցու ու փարդիքցու պատ-րաստում ու ամեն տեսակ «եաղլուխներ» շինում։

Խօսելով նրանց տնացին արդիւնաբերութեան մասին, աւելորդ չեմ համարում մի քանի խօսք ասել նրանց երկրագործական սարքի վրայ։ Նրանց արօրը շատ պարզ կազմութիւն ունի։ ամբողջապէս փայ-տից է, միայն խոփն է երկաթէ։ Մի անկիւնաձե ծակած փայտ է։ մի կողմը գետնի վրայ է քսւում («ընեղ») և նրա ծացին է ամրա-

ցած խոփը. միւս ծայրը մի քիչ թեք կերպով ցցուած է և մաճի տեղ է բռնում («պոչ»): Ծակած տեղին մօտիկ կցուած է մի երկայն փայտ («օք»), որի ծայրից լծում են եզներին: Վերջապէս արօրի ներքեւի կողմը, գետնին մօտիկ, մի փոքր տախտակ է մեխուած՝ ակօսի հողը մի կողմ թափելու համար: Այդ է բոլոր կազմութիւնը. ուրիշ ոչ անիւ ունի և ոչ մի բան: Արօրում միայն եզներ են լծում, ձի չեն բանեցնում: Այդ արօրով թէև կարելի է ուզած խորութիւնով հերկել, բայց սովորաբար նրանք խորը չեն հերկում: Գութան բոլորովին չեն բանեցնում. երբեմն միայն պատահում են երկխոփաւոր արօրներ («չաթալ յարօր»), որ սովորականից շատ են հերկում: Նրանց արօրը առհասարակ շատ հեշտ ու թեթև է բանում: Համարձակ կարելի է ասել, որ այնպիսի խորդ ու բորդ, քարքարոտ ու անհարթ տեղերում, ինչպէս Կովկասեան ու հայրենական ափերի հայերի նստած տեղերն են, նրանց արօրը մեծ յարմարութիւն ունի երկիրը մշակելու համար: Ինքը շատ թեթև. տեղը ինչքան զառի վեր լինի, դժուար չի լինի շարժել ոչ եզան համար և ոչ քշողին:

Միևնոյն յարմարութիւններն ունի և նրանց սայը, որ չը նայելով որ բոլորովին թիւրքական շէնք ունի, ծանր ու դանդաղ բան է, միապաղադ անիւներով, բայց ինչ կասէք, որ նրանց տեղերի համար ամենալաւ սայն է: Թէև ծանր է գնում, բայց ամուր ու դիմացկուն բան է: Ինչքան կուզէ ցեխոտ ու անհարթ լինի ճանապարհը, եթէ միայն քարքարոտ չէ, բան չի լինի սային, մանաւանդ եթէ գոմշաեզներ են լծուած: Եւրօպական կատարելագործուած չորս անւաւոր սայերի մասին չի կարելի խօսել, քանի որ գեռ ամբողջ Կովկասեան ափերում հաղորդակցութեան համար հազիւ միայն մի մեծ ճանապարհ կայ, այն է՝ ծովեզրեայ խճուղին, իսկ դէպի հայ գաղթաշէնները ամբողջ ափերում ոչ մի օրինաւոր, բացուած ճանապարհ չը կայ:

Երկրագործական ոչ մի մեքենայ ու կատարելագործուած սարք չունին նրանք հացաբոյսերի մշակութեան համար: Բոլոր աշխատանքները կատարւում են սովորական նահապետական: Ճեռվ ու գործիքներով: Մի քիչ աւելի յարմարութիւններ գտել են թութունի վերաբերութեամբ, չորացնելու համար հնարելով բաւական յարմար շէնքեր, որոնք իրանց այժմեան ճեռվ այս վերջին տարիներս են հնարուել ու շինուել:

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ԷԼ ՆՐԱՆՑ ԱՊՐՈՒՍՏԻ ՄԱՍԻՆ.

Համշէնցի հայերի ապրուստը շատ խեղճ է ու պարզ։ Ոչ միայն երեխաները, այլ և մեծերից շատերը, աւելի կանաքք՝ շատ անգամ օրերը բոբիկ ոտով են անցնում, մանաւանդ խորը ցեխերին իսկ երեխաները հօ համարեա տարուայ մեծ մասը բոբիկ են մնում։ Բանելիս շատ խեղճ ու պարզ են հագնում. միայն տօն օրերին են զարդարւում։ Աւելի խեղճ ու աղքատիկ է նրանց սնունդը։ Ինչպէս վերևն ասեցի, նրանց սովորական հացը սիմինդրի հացն է. ցորենի հացը աւելի պաս օրերին են ուտում, իսկ չունեցողը ողջ տարին համն էլ չի առնում։ Նրանց ամենասովորական կերակուրը թանն է. ուտիս օրերին նրանց գլխաւոր ուտելիքը դա է։ Պասին բանեցնում են աւելի «բօնջար», լոբիա, սոխ, պրաս, սխտոր, թթու, «բէքմէզ» (պտուղներից շինած մեղք), երբեմն էլ իսկական մեղք՝ սովորաբար ջրած. «բէքմէզն» էլ նոյնպէս. մէկ որ այդպէս լաւ կը բրդուի և մէկ էլ որ շատ կը դիմանայ. Մածուն քիչ են ուտում. տեղ-տեղ՝ ուր կաթը քիչ է, գուցէ ամիսը մի անգամ. զուտ մածուն այնքան չեն ուտում, ինչքան մածնախառը թան։ Իւղ սովորաբար դրսից չեն գնում. եթէ կթուան ունենում են, ուտում են. եթէ ոչ ամիսներ բանջարեղէններով են անցկացնում։ Երբեմն միայն աւելցած իւղը ծախում են. իւղեղէն կերակուրներից գործ են ածում աւելի խմորեղէններ (ցորենի ալիւրից)։ Նրանց սովորական իւղալի կերակուրը «ճաշն» է (սիմինդրի ալիւրը ջրով եփած և վրան իւղ լցած)։ Ճիշտ է՝ օրը երեք անգամ ուտում են, բայց կերածը խեղճ ու անսնունդ բան է. Ամենից շատ ուտում են թանը. միշտ որ մածուն ուտեն, եթէ կթուան էլ ունենան, իւղ չի մնալ. գնելն էլ ամենքին չի ձեռք տալ։ Դրսից գնածը սովորաբար աղք, բրինձը, նաւթն ու կտորեղէնն է լինում. Բրնձից շինած ուտելիքը (հասարակ ու կաթով փլաւը), ձուածեղի, «նշստափ» (ցորենի ալիւրը կաթով եփած), հաւի ու խմորեղէնի հետ կազմում է նրանց ամենաճոխ սեղանը, որ տարին հազիւ մի քանի անգամ է լինում, ամենահանդիսաւոր օրերին և կամ պատւաւոր հիւրերի համար։